



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<15>> փետրվարի 2023թ.

N ՄՈ/ 61 - -Ա

ք. Արմավիր

«ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ՏՆՕՐԵՆ ԿԱՐԻՆԵ ՍՄՔԱՏՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ և 163-րդ, 164-րդ հոդվածներով և 167-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2022 թվականի դեկտեմբերի 5-ի ՄՈ/688-Ա որոշումը և Կարինե Սմբատյանի 2023 թվականի փետրվարի 14-ի դիմումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. «Սարդարապատի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Կարինե Սմբատյանին տրամադրել տեղափոխված ամենամյա արձակուրդի մասը՝ 2023 թվականի փետրվարի 20-ից 28-ը ներառյալ՝ 7 աշխատանքային օր տևողությամբ:
2. Կարինե Սմբատյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Սարդարապատի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Սարդարապատի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ուսումնական գծով տնօրենի տեղակալ Հասմիկ Գրիգորյանին:
3. 2023 թվականի փետրվարի 20-ից 28-ը ներառյալ «Սարդարապատի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ուսումնական գծով տեղակալ Հասմիկ Գրիգորյանի աշխատավարձի վճարումն իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:
4. Կարինե Սմբատյանին աշխատանքի մեջ համարել 2023 թվականի մարտի 1-ից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:



15.02.2023

VERIFIED OCSP 15.02.2023 16:04:32 GMT+4